

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր**  
**ՀՈՂԱՄԱՍԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ.**

ք. Երևան  
№ \_\_\_\_\_

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2021թ.

Երևան համայնքը՝ (այսուհետ՝ վաճառող) ի դեմս Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի, որի անունից Երևանի քաղաքապետի \_\_\_\_\_ որոշման հիման վրա հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ՝ \_\_\_\_\_, մի կողմից և \_\_\_\_\_ (այսուհետ՝ գնորդ), մյուս կողմից, Երևանի քաղաքապետի \_\_\_\_\_ որոշման հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1. Սույն պայմանագրով վաճառողը պարտավորվում է \_\_\_\_\_, որպես սեփականություն հանձնել \_\_\_\_\_ հասցեում գտնվող \_\_\_\_\_ քմ մակերեսով հողամասը (ծածկագիր Ա \_\_\_\_\_) /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. \_\_\_\_\_ վկայական/ (այսուհետև՝ գույք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել է \_\_\_\_\_ ՀՀ դրամ:

2. Գույքի համար վճարված գինը որոշված է հողամասն աճուրդով վաճառելու արդյունքները հաստատելու մասին Երևանի քաղաքապետի \_\_\_\_\_ որոշմանը կից հ. 1 հավելվածում, որը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

3. Սույն պայմանագրի կնքման պահին գույքի գինը գնորդի կողմից վճարված է:

4. Վաճառողը երաշխավորում է, որ սույն պայմանագրի կնքման պահին գույքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ և արգելանքի տակ չի գտնվում՝ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման կողմից տրված \_\_\_\_/\_\_\_\_/\_\_\_\_թ. հ. ՄՏ-\_\_\_\_\_ միասնական տեղեկանքի:

**II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել գույքի օգտագործման նպատակի, չափերի, կարգի, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի (գյուղատնտեսական հողերի դեպքում նաև որակական հատկանիշների, ինչպես նաև սահմանափակումների (ներառյալ սերվիտուտները) առկայության մասին Երևանի քաղաքապետարանում \_\_\_\_\_-ին կայացած աճուրդից մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված տվյալներին համապատասխան գույք:

6. Եթե վաճառողը գնորդին է հանձնել սույն պայմանագրի 5-րդ կետում նշված պայմաններին չհամապատասխանող գույք, ապա գնորդն իրավունք ունի հրաժարվել հանձնված գույքից և պահանջել վերադարձնել գույքի համար վճարված գինը:

7. Գնորդը պետք է իր սեփական միջոցների հաշվին տեղափոխի տարածքով անցնող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական հաղորդակցուղիները:

**III. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ**

8. Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

9. Գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:

**IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

10. Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կրում են գույքային պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## Վ. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

11. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքվելու, նոտարական կարգով վավերացվելու և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնում պայմանագրից ծագող իրավունքների գրանցման պահից և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

## ՎԻ. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

12. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## ՎԻԻ ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կամ պայմանագիրը լուծվում է գրավոր համաձայնությամբ կամ դատարանի վճռով:

15. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկական օրինակ պահվում է կողմերի մոտ, նոտարական գրասենյակում, ինչպես նաև անշարժ գույքի գրանցման լիազորված պետական մարմնում:

16. Սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր վճարումները, այդ թվում պետական տուրքը, կատարվում են գնորդի կողմից:

## ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՏԱՐՐԵՐԸ

ՎԱՃԱՌՈՂ

ԳՆՈՐԴ

ստորագրություն

ստորագրություն

Կ.Տ.

ԱԿՏ  
ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 2021թ.

Մենք, ներքոստորագրյալներս՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանս, մի կողմից \_\_\_\_\_՝ մյուս կողմից, կազմեցինք սույն ակտը առ այն, որ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող \_\_\_\_\_ հասցեում գտնվող \_\_\_\_\_ քմ մակերեսով հողամասը (ծածկագիր Ա \_\_\_\_\_) Երևան համայնքի կողմից (վաճառող) հանձնվել է \_\_\_\_\_ (գնորդ):

ՎԱՃԱՌՈՂ

ԳՆՈՐԴ

-----  
ստորագրություն

-----  
ստորագրություն

Կ.Տ.